ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Վ/32-2024
ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
12 փետրվար 2024 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝ Վարչապետ (խորհրդի նախագահ)	Ն. Փաշինյան
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (խորհրդի անդամներ)՝	
Բարձրագույն դատական խորհրդի նախագահ	Կ. Անդրեասյան
Փոխվարչապետ	Մ. Գրիգորյան
Արդարադատության նախարար	Գ. Մինասյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար	Գ. Սանոսյան
Վարչապետի աշխատակազմի ղեկավար	Ա. Հարությունյան
Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	Վ. Վարդանյան
Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար	Հ. Կոնջորյան
Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	Ռ. Բաքոյան
Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	Ա. Ջուլիակյան
Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար	Ա. Հովհաննիսյան
Վճռաբեկ դատարանի նախագահ	Լ. Թադևոսյան
Գլխավոր դատախազ	Ա. Վարդապետյան
Մարդու իրավունքների պաշտպան	Ա. Մանասյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող	Մ. Գալստյան
Պետական վերահսկողական ծառայության ղեկավար	Ռ. Պետրոսյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Կ. Կարապետյան
Տարածքայի կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ	Վ.Տերտերյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Լ. Ալեքսանյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Ա. Փաշինյան
Վարչապետի աշխատակազմի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության համակարգող	Լ. Աֆրիկյան
Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետի տեղակալ	Ե. Կարապետյան
«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության	Ն. Կարամանուկյան

տնօրենների խորհրդի անդամ	
«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն	Ս. Այվազյան
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար	Ա. Սաքունց
«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Կ. Զադոյան
«Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող	Դ.Իոաննիսյան
ՆԵՐԿԱ ԷՐ՝	
Վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ	Ա. Խաչատրյան
Վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ	Վ. Մկրտչյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային հարց

Համայնքի ավագանու անդամների կողմից այլ հանրային պաշտոն զբաղեցնելու սահմանափակումների հարցի քննարկում:

1.Նիստը բացեց՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) նախագահը՝ ներկայացնելով քննարկման ենթակա հարցը, ինչպես նաև առաջարկեց, որ քննարկվող հարցի վերաբերյալ զեկույցներով հանդես գան ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

2. Խորհրդի նիստերի օրակարգի ձևավորման հետ կապված ներկայացվեցին հետևյալ դիտարկումները.

1) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը առաջարկեց Խորհրդի առաջիկա նիստերին քննարկման առարկա դարձնել ազդարարման համակարգի կամ քաղաքացի իրավապահ մարմինների համագործակցության և գնումների հետ կապված հարցերը:

2) «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Արթուր Սաքունցն առաջարկեց

Խորհրդի նիստի քննարկման առարկա դարձնել նաև ընտրական գործընթացների ժամանակ ընտրական խախտումների վերաբերյալ քննության ընթացքի և որակի մասին հարցերը։

3) «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Սոնա Այվազյանն առաջարկվեց առկա օրակարգային հարցերը քննարկել ավելի համապարփակ կերպով՝ ներառելով քննարկվող հարցի վերաբերյալ առկա բոլոր խնդիրները։

4) «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Կարեն Զադոյանն առաջարկեց Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղղությունների վերաբերյալ առկա հարցերը հավաքագրելու համար սահմանել որոշակի ժամկետ դրանք քարտուղարությանը ներկայացնելու համար, քննարկել ձևավորված ոչ ֆորմալ Հակակոռուպցիոն աշխատանքային խմբում և ներկայացնել Խորհրդի նիստի քննարկմանը։

5) Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նախագահը, բարձրացված հարցերին անդրադառնալով, առաջարկեց Խորհրդի քարտուղարությանը հերթական առաջիկա նիստի կազմակերպման նպատակով Խորհրդի անդամներից հավաքագրել նիստի օրակարգային հարցերի առաջարկները և ըստ ստացված առաջարկությունների քանակի՝ անհրաժեշտության դեպքում, դիտարկել արտագնա նիստի անցկացման նպատակահարմարության հարցը։

3. Զեկույցով հանդես եկավ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը՝ նշելով հետևյալը.

1) «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ մինչև 2022 թվականի հունիսի 9-ը գործող խմբագրությամբ 31-րդ հոդվածով Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար սահմանված էր բացարձակ արգելք և նրանք չէին կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում։

2) Միաժամանակ ներկայացվեց, որ 2022 թվականի հունիսի 9-ին «Հանրային ծառայության մասին» օրենքում իրականացված օրենսդրական փոփոխություններով սահմանվել է բացառություն համայնքի ավագանու անդամների համար։ Ներկայացվեց համայքնի ավագանու կողմից այլ պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ գործող օրենսդրական կարգավորումները։

3) Նշվեց, որ վերոգրյալ իրավական փոփոխությունների արդյունքում առաջանում է օրենքների միատեսակ մեկնաբանման, որոշակիության և գործնականում կիրառման խնդիրներ՝ մասնավորապես, օրենսդրությունը, մի կողմից հանրային ծառայողներին և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց արգելում է զբաղեցնել տեղական ինքնակառավարման մարմնում պաշտոն, իսկ մյուս կողմից համայնքի ավագանու անդամին չի արգելում զբաղեցնել հանրային ծառայության պաշտոն և հանրային պաշտոն (որոշ բացառությունները չհաշված)։

4) Նշված կարգավորումների պարագայում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վեր է հանել դեպքեր, երբ համայնքի ավագանու անդամները զբաղեցնում են նաև այլ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ։

5) Ներկայացվեց տեղական ինքնակառավարման ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, դրա վերաբերյալ մոնիթորինգային զեկույցը։ Նշվեց, որ 2022 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունները ռիսկ են պարունակում Խարտիայի հերթական մոնիթորինգային զեկույցի շրջանակներում բացասական գնահատականի արժանանալու տեսանկյունից։

4. Օրակարգային հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, մասնավորապես՝

1) 2022 թվականի հունիսի 9-ին իրականացված օրենսդրական փոփոխությունները խնդրահարույց չեն, քանի որ համայնքի ավագանու անդամի՝ այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումների դեպքերը հստակ սահմանված են ոլորտային օրենսդրությունում, իսկ «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ 2022 թվականի հունիսի 9-ից հետո իրականացված փոփոխություններով համայնքի ավագանու անդամներին չի արգելվում զբաղեցնել հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ։ Անդրադարձ կատարվեց նաև միջազգային պարտավորություններին՝ նշվելով, որ վերոնշյալ ռիսկերը բացակայում են։

5. Զեկույցով հանդես եկավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը, մասնավորապես՝

1) անհամատեղելիության պահանջների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումների մեկնաբանման և պարզաբանման լիազորությունը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով վերապահված է Հանձնաժողովին։

2) Ներկայացվեց, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար սահմանված է բացարձակ արգելք և նրանք չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում՝ այդ թվում, լինել համայնքի ավագանու անդամ։

3) Նշվեց, որ հակառակ մեկնաբանության պարագայում առաջանում է շահերի բախման, իշխանությունների տարանջատման, հանրային ծառայողների քաղաքական չեզոքություն պահպանելու սկզբունքներին առնչվող խնդիրներ։

6. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) ՀՀ փոխվարչապետ Միեր Գրգորյանն անդրադարձ կատարեց համայնքի ավագանու անդամների գործառույթներին, լիազորությունների բնույթին, միջազգային փորձի կիրառելիության հարցին՝ նշելով, որ այն պետք է դիտարկել համակարգային տեսանկյունից։

2) Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը նշեց, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված դիրքորոշումը համայնքի ավագանու անդամների անհամատեղելիության պահանջների վերաբերյալ ընդունելի է, բայց ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված մեկնաբանություններով։ Նշվեց, որ առկա կարգավորումները տարընթերցման տեղ են տալիս և առկա է օրենսդրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտություն, իսկ 2022 թվականի հունիսի 9-ին իրականացված օրենսդրական փոփոխությունները չեն կարողացել հասնել դրանցով հետապնդվող նպատակին։

3) ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ներկայացրեց Դատախազության իրավասությունների իրականացման ընթացքում համայնքի ավագանիների գործունեության շրջանակներում առկա խնդիրները և առաջարկվեց վերանայել կարգավորումները այն համատեքստում, որ չառաջանա պաշտոնների համընկնում։ Նշվեց, որ առկա օրենսդրական իրավակարգավորումներն ունեն վերանայման կարիք, իսկ գործող

կարգավորումների պարագայում ընդունելի է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մեկնաբանությունը։

4) Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը նշեց, որ առկա օրենսդրական կարգավորումներն ունեն կամ վերանայման, կամ առնվազն ունեն միասնական մեկնաբանության կարիք, որպեսզի դրանք չհանգեցնեն խնդրահարույց իրավիճակների։ Միաժամանակ նշվեց, որ առկա կարգավորումների պարագայում համայնքի ավագանու անդամի պաշտոնը չպետք է համարվի համատեղելի հանրային պաշտոնների կամ հանրային ծառայության պաշտոնների հետ։

5) Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանը նշեց, որ գործող իրավակարգավորումները տարատեսակ մեկնաբանությունների տեղիք են տալիս և անհրաժեշտ է սահմանել հստակ կարգավորումներ։

6) Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը նշեց հետևյալը.

6.1. առկա կարգավորումները խնդրահարույց են և հանգեցնում են տարբեր մեկնաբանությունների, սակայն հնչեցվեց կարծիք, որ գործող կարգավորումները չեն հանգեցնում համայնքի ավագանու անդամի համար հանրային պաշտոնների կամ հանրային ծառայության պաշտոնների բացարձակ արգելքի։

6.2. Ցանկացած մոդել՝ այն է, համայնքի ավագանու անդամի՝ այլ պաշտոններ զբաղեցնելու բացարձակ արգելքը կամ հարաբերական արգելքը, ինչպես նաև սահմանափակումների բացակայությունը, ընդունելի է։ Կարևորվեց բացարձակ արգելք սահմանելու պարագայում մասնագիտացված ավագանու ինստիտուտի առկայության անհրաժեշտությունը։ Բացի այդ, նշվեց օրենսդրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտության առկայությունը։

7) Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Կոնջորյանը նշեց, որ առկա են օրենսդրական տարընկալումներ և անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական փոփոխություններ։ Միաժամանակ ներկայացվեց կարծիք՝ բացարձակ սահմանափակումներ չամրագրելու և անհամատեղելի պաշտոնների հստակ շրջանակ սահմանելու վերաբերյալ։

8) Ազգային ժողովի պատգամավոր Ռուստամ Բաքոյանն անդրադարձավ տեղական ինքնակառավարման մարմիններում շահերի բախման, անհամատեղելիության պահանջներին՝ նշելով, որ համայնքի ավագանու անդամի

պաշտոնի համատեղելիությունը հանրային պաշտոնների և հանրային ծառայության պաշտոնների հետ ընդունելի է։

9) Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը ներկայացրեց համայնքի ավագանիների զարգացման հնարավոր ուղիները՝ անդրադարձ կատարելով համայնքի ավագանու անդամների գործունեության բնույթին, դրանց մասնագիտացվածությանը, ավագանու անդամների աշխատանքի վարձատրության հարցերին։

10) «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Սոնա Այվազյանը նշեց, որ համայնքի ավագանու անդամի պաշտոնը համատեղելի չէ հանրային պաշտոնների կամ հանրային ծառայության պաշտոնների հետ՝ այդ թվում, տեղական ինքնակառավարման կառուցվածքի համատեքստում։ Նշվեց, որ տեղական ինքնակառավարման մարմիններում հանրային ծառայողների առկայությունը կարող է ունենալ կաշկանդող բնույթ։ Ներկայացրեց տեղական ինքնակառավարման զարգացման հետագա տեսլականի վերաբերյալ դիրքորոշում։

11) «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Արթուր Սաքունցը ներկայացրեց համայնքի ավագանու անդամի պաշտոնի և հանրային պաշտոնների կամ հանրային ծառայության պաշտոնների համատեղելիության պարագայում շահերի բախման հնարավոր իրավիճակների առաջացման խնդիրները։ Առաջարկվեց որպես խնդրի հնարավոր լուծում դիտարկել օրենսդրական կարգավորումների իրականացումը՝ հստակ սահմանելով անհամատեղելիության պահանջները։

12) «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Կարեն Զադոյանը առաջարկեց գործող կարգավորումների պաշտոնական պարզաբանում տրամադրել և իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելով որ համայնքի ավագանու անդամի պաշտոնը չի կարող համատեղվել հանրային պաշտոնների կամ հանրային ծառայության պաշտոնների հետ և դիտարկել ապագայում համայնքի ավագանու անդամների գործունեության փոխհատուցելիության հարցը։

13) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը առաջարկեց քննարկել տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման հեռանկարը,

առաջարկվեց նաև այս հարցը դիտարկել սահմանադրական բարեփոխումների շրջանակներում քննարկելու հնարավորությունը։

7. Խորհրդի անդամների կողմից ներկայացված հարցերի, առաջարկությունների և տեղի ունեցած քննարկման հիման վրա Խորհրդի նախագահի կողմից քվեարկության դրվեց հետևյալ հարցերը.

1) Ավագանու անդամների համար սահմանել բացարձակ արգելք՝ զբաղեցնելու հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ։

- Կողմ քվեարկվեցին Խորհրդի 14 անդամներ։

2) Ավագանու անդամների համար սահմանել ոչ բացարձակ արգելք՝ և սահմանել որոշակի բացառություններ, որոնցով ավագանու անդամները կարող են զբաղեցնել որոշակի հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ։

- Կողմ քվեարկեցին Խորհրդի 4 անդամներ։

3) իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ հստակ սահմանելով համայնքի ավագանու անդամների անհամատեղելիության պահանջները, ինչպես նաև սահմանել, որ այն ավագանու անդամները, ովքեր գործող օրենսդրական կարգավորումների պարագայում հայտնվել են անհամատեղելիության իրավիճակում, նրանց «համաներում» է տրամադրվում։ Իրականացված օրենսդրական փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո առաջիկա ավագանու ընտրությունների ժամանակ սահմանել բացարձակ արգելք համայնքի ավագանու անդամների և հանրային ծառայության պաշտոնների անհամատեղելիության մասով։

- Կողմ քվեարկեցին Խորհրդի 16 անդամներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ